Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 09

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<21>> հունիսի 2021թ. ք. Երևան

2021 թվականի հունիսի 21-ին տեղի ունեցավ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Կարապետյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,
Ա. Թումանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Ա. Պապյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Ա. Բաղալյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,

Ն. Թևոսյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ ստանալու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
2.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
3. «ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՌԱԶՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2021թ. հունիսի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, ի պատասխան լիազոր մարմնի 2021 թվականի հունիսի 10-ի թիվ ԱՍ/25.1/14667-2021 գրության՝ լիազորված անձ Լ. Մանուկյանի կողմից ներկայացված հայտ ձև 2 տեղեկանքը և ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում սակաչափիչների ստուգաչափման տեղեկանքի ուղղված տարբերակի բնօրինակը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր ՌԱԶՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2021թ. հունիսի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, ի պատասխան լիազոր մարմնի ԱՍ/25.1/14667-2021 գրության՝ լիազորված անձ Լ. Մանուկյանի կողմից ներկայացված հայտ ձև 2 տեղեկանքը և ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում սակաչափիչների ստուգաչափման տեղեկանքի ուղղված տարբերակի բնօրինակը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու մասին և տեղեկացրեց, որ անհատ ձեռնարկատեր ՌԱԶՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ 2021թ. հունիսի 7-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ներկայացրել է անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ ստանալու հայտ՝ կից փաստաթղթերով, որտեղ առկա չէր կառավարության 2014թ. դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի /այսուհետև՝ Կարգ/ 10-րդ կետով պահանջված հայտ N 2 ձևը և չէր իրականացվել նույն Կարգի 11.1 կետով սահմանված՝ փաստաթղթերի բնօրինակների ներկայացման պահանջը: 2021թ. հունիսի 14-ին լիազորված անձ Լ. Մանուկյանի կողմից ներկայացվել են հայտ N 2 ձևը և Կարգի 11-րդ կետով պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Ըստ Կարգի 11.1 կետի՝ ավտոմոբիլի տեխնիկական անձնագրի և սեփականության վկայականների բնօրինակները վերադարձվել են պատճենները բնօրինակների հետ համադրելուց հետո: Միաժամանակ լիազորված անձի կողմից ներկայացվել է նաև ավտոմոբիլների վրա տեղադրված սակաչափիչների ստուգաչափման տեղեկանքի ուղղված տարբերակը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՌԱԶՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Լիցենզավորման մասին» օրենքի 28-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման պահանջներին, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտերի քննարկում:

Քննարկվեց՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ 07.06.2021թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների

իրականացման ՏՖ N 09249 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ 07.06.2021թ. դիմումը և դիմումին կից ներկայացված՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 09249 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

. <<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

<<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի հունիսի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի հունիսի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 07.06.2021թ. թիվ ԱՍ/25.1/14316-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ արգելակային համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոց հանդիսացող ստենդը, համաձայն կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին, պետք է լինի հոլովակային, մինչդեռ MPP 2140/2240 ստենդը հոլովակային չէ,

բ/ Անհատ ձեռնարկատեր Հովհաննես Ֆրունզեի Ավետիսյանի և Կազմակերպության միջև 20.05.2021թ. կնքված անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագրով և կից ներկայացված հատակագծի համաձայն՝ Կազմակերպության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնված է Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի Չարենցավանի խճուղի 10 հասցեում գտնվող թիվ 14 մասնաշենքից 108 քմ. տարածք, սակայն պայմանագրում առկա չէ նույն մասնաշենքի՝ Կազմակերպության

տիրապետման կամ օգտագործման տակ չգտնվող հողամասով անցնելու և ելքերից որևէ մեկը օգտագործելու իրավունքը հաստատող պայման,

գ/ Հայտին կից փաստաթղթերում առկա չէ Կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344-Ն որոշման հավելվածի ցանկ N 3-ով սահմանված՝ տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկի 6-րդ և 14-րդ կետերով սահմանված՝ ղեկային վարման համակարգի արատորոշման և տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի ստուգման սարքավորումները:

«Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կազմակերպությանն առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել նշված թերությունները կամ ներկայացնել պարզաբանումներ նշված թերությունների վերաբերյալ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշմամբ հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 344-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին: «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով և 5-րդ մասով ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
քարտուղար Ա. Ստեփանյան